# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

## ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2012 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

**Բանկի Վարչության հայտարարությունը**

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 08.05.12թ. |
| **Նշան Գրիգորյան** | **Վարչության անդամի ժ/պ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 08.05.12թ. |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 08.05.12թ. |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 08.05.12թ. |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, տարածքային ստորաբաժանումների կոորդինացման բաժնի պետ** | | 08.05.12թ. |

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի  կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

## Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 102,160,410 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 32,300,238 հազ. ՀՀ դրամով կամ 46.2%-ով, իսկ 31.12.11թ.-ի համեմատ՝ 14,584,049 հազ. ՀՀ դրամով կամ 16.7%-ով:

Նշված ժամանակահատվածների համեմատ հաշվետու եռամսյակի ակտիվների մեծության փոփոխությունները բնորոշ են ֆինանսական տարվա այդ ժամանակահատվածի գործարար ակտիվությանը:

2012 թվականի 1-ին եռամսյակի ավարտին, նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 12,923,869 հազ. ՀՀ դրամ կամ 48.4%, հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների՝ 13,744,249 հազ. ՀՀ դրամ կամ 47.1%, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների՝ 2,471,131 հազ. ՀՀ դրամով կամ 34.2%-ով, ինչպես նաև 2,843,942 հազ. ՀՀ դրամով կամ 64.5%-ով աճով:

Նախորդ տարվա տարեվերջի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 21,282,926 հազ. ՀՀ դրամ կամ 116.1%, և հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների՝ 4,574,153 հազ. ՀՀ դրամով կամ 11.9%-ով, աճով:

## Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների մնացորդները կազմել են 42,954,189 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 13,744,249 հազ. ՀՀ դրամով կամ 47.1%-ով, իսկ 31.12.11թ.-ի համեմատ՝ 4,574,153 հազ. ՀՀ դրամով կամ 11.9%-ով:

2012թ. 1-ին եռամսյակում Բանկի կողմից տրամադրված վարկերի աճը պայմանավորված է ՀՀ տնտեսության ակտիվացմամբ և որպես հետևանք՝ գործող և նոր հաճախորդների կողմից ֆինանսական միջոցների հանդեպ սպառողական և բիզնես վարկավորման հիման վրա առաջացած շարունակական պահանջմունքով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 25,041,382 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 14,194,721 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր, որի հիման վրա կարելի է կարծիք կազմել վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

## Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 7,256,080 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 2,843,942 հազ. ՀՀ դրամով կամ 64.5%-ով, իսկ 31.12.11թ.

համեմատ նվազել է 1,925,907 հազ. ՀՀ դրամով կամ 21.0%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 15,893,785 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21,279,449 հազ. ՀՀ դրամի դիմաց:

## Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 151,976.7 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 5,822,679.4 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը՝ 18,980.8 հազ. Եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 140,644 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 126,769 հազ. ՀՀ դրամի դիմաց: Արձանագրված աճը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ արտարժույթային գործառնությունների շուկայում գործարքների ծավալների և տնտեսական ակտիվության աճով:

## Պարտավորություններ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 89,006,751 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 29,912,933 հազ. ՀՀ դրամով կամ 50.6%-ով, իսկ 31.12.11թ. համեմատ՝ 13,671,838 հազ. ՀՀ դրամով կամ 18.1%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների աճով, որը կազմել է 21,249,598 հազ. ՀՀ դրամ կամ 46.2%: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 2,676,662 հազ. ՀՀ դրամով կամ 26.1%-ով:

31.12.11թ.-ի համեմատ, պարտավորությունների աճը պայմանավորված է հաճախորդների նկատմամբ պարտավորությունների (12,285,300 հազ. ՀՀ դրամով կամ 22.3%-ով) և բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (1,150,218 հազ. ՀՀ դրամ կամ 5.9%) աճով:

## Կապիտալ

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 13,153,659 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 2,387,305 հազ. ՀՀ դրամ, իսկ 31.12.11թ. համեմատ՝ 912,211 հազ. ՀՀ դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է չբաշխված շահույթի՝ 2,248,988 հազ. ՀՀ դրամ կամ 69.7%:

31.12.11թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորված է չբաշխված շահույթի աճով՝ 863,251 հազ. ՀՀ դրամ կամ 18.7%:

## Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 824,884 հազ. ՀՀ դրամով կամ 57.6%-ով՝ կազմելով 2,256,800 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (1,450,809 հազ. ՀՀ դրամ կամ 64.3%), պարտքային արժեթղթերից ստացված եկամուտներին (196,771 հազ. ՀՀ դրամ կամ 8.7%) և Ռեպո համաձայնագրերից ստացված եկամուտներին (252,043 հազ. ՀՀ դրամ կամ 11.2%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 101,450 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 22,438 հազ. ՀՀ դրամով կամ 18.1%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

| **հազ. ՀՀ դրամ** | **2011թ 1-ին եռամսյակ** | **2012թ 1-ին եռամսյակ** |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 1,431,916 | 2,256,800 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | (530,549) | (794,995) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **901,367** | **1,461,805** |
| | | |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 167,188 | 186,016 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | (43,300) | (84,566) |
| **Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ** | **123,888** | **101,450** |
| | | |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից | 134,262 | 170,982 |
| Այլ գործառնական եկամուտ | 10,891 | 22,223 |
| | | |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | (71,824) | (28,527) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (424,409) | (539,569) |
| Այլ գործառնական ծախսեր | (118,025) | (140,427) |
| **Շահույթ/(վնաս) հարկումից առաջ** | **556,150** | **1,047,937** |
| **Շահութահարկի գծով ծախս** | **(45,969)** | **(184,686)** |
| **Շահույթ հարկումից հետո** | **510,181** | **863,251** |

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 794,995 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 264,446 հազ. ՀՀ դրամով կամ 49.8%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդների և վարկերի

դիմաց կատարված տոկոսային ծախսերին, որն աճել է 220,299 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն աճել են 115,160 հազ. ՀՀ դրամով կամ 27.1%-ով՝ կազմելով 539,569 հազ. ՀՀ դրամ:

## Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը ձևավորել է 863,251 հազ. ՀՀ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 510,181 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 6.8%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.9%:

Հաշվետու եռամսյակի 863,251 հազ. ՀՀ դրամ շահույթի ձևավորման արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 724 ՀՀ դրամ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 427 դրամի դիմաց:

## Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված եկամուտներում, կազմել է 18,828 հազ. ՀՀ դրամ կամ 11.3%:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների հավաքագրումը, որը նախորդ տարվա նույն ժամակահատվածի համեմատ, աճել է 819,526 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 2,166,679 հազ. ՀՀ դրամ:

2012 թվականի մարտի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 148,685, որը 2010 թ. մարտի 31-ի համեմատ աճել է 43,920-ով:

## Վճարահաշվարկային գործառնություններ

### Չեկեր

Հաշվետու միջանկյալ ժամանակահատվածում Բանկը շարունակել է իրականացնել չեկերի տրամադրման և սպասարկման գործառնությունները: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը American Express TC ընկերության հետ: Հաշվետու միջանկյալ ժամանակահատվածում Բանկը տրամադրել և սպասարկել է 22 հատ ճանապարհային և բանկային չեկեր:

**<u>Ակրեդիտիվներ</u>**

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է 75,180 ԱՄՆ դոլար գումարի ակրեդիտիվ և տրամադրել է 210,000 ԱՄՆ դոլարի և 34,400 Եվրոյի երաշխիքներ:

**<u>Միջազգային դրամական փոխանցումներ</u>**

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 49,574,069 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 35,152,049 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

## Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 2,496 հատով, որից 2,137-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 359-ը՝ MasterCard և Visa Card միջազգային պլաստիկ քարտերին:

Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 88,306 հատ:

## Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

| Ցուցանիշի անվանումը | 2011 թվ., 1 եռ. | 2012 թվ., 1 եռ. |
|---|---|---|
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 510,181 | 863,251 |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 10,478,563 | 12,604,109 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), % | 4.9 | 6.8 |
| | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 510,181 | 863,251 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 67,775,245 | 97,592,059 |
| Ակտիվների շահութաբերություն (ROA), % | 0.8 | 0.9 |
| | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 510,181 | 863,251 |
| Գործառնական եկամուտ | 1,170,408 | 1,756,460 |
| Զուտ շահույթի մարժա (NPM), % | 43.6 | 49.1 |
| | | |
| Գործառնական եկամուտ | 1,170,408 | 1,756,460 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 67,775,245 | 97,592,059 |
| Ակտիվների օգտագործման գործակից (AU), % | 1.7 | 1.8 |
| | | |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 67,775,245 | 97,592,059 |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 10,478,563 | 12,604,109 |
| Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) | 6.5 | 7.7 |
| | | |
| Զուտ տոկոսային եկամուտ | 901,367 | 1,461,805 |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 53,239,547 | 77,211,610 |
| Զուտ տոկոսային մարժա (NIM),% | 1.69 | 1.9 |
| | | |
| Տոկոսային եկամուտ | 1,431,916 | 2,256,800 |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 53,239,547 | 77,211,610 |
| Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, % | 2.69 | 2.9 |
| | | |
| Տոկոսային ծախսեր | 530,549 | 794,995 |
| Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային | 34,869,814 | 50,430,146 |

| | | |
|---|---|---|
| ծախսեր | | |
| Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, % | 1.52 | 1.6 |
| | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 510,181 | 863,251 |
| Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ | 1,192 | 1,192 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ | 427 | 724 |
| | | |
| Սպրեդ, % | 1.17 | 1.3 |

## Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնականում վարկային ներդրումների աճի հաշվին,
- ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի հաճախորդների թվի շարունակական աճի, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- նոր մասնաճյուղերի ստեղծում ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

*Ենթահավելված 7*
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

*Հավելված 7*
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ7)

«31» Մարտի 2012թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված) | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) |
|---|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 39,609,534 | 18,326,608 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | | - |
| 1.3 | Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 14 | 9,702,463 | 18,984,877 |
| 1.4 | Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ | 15 | | |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 16 | 42,954,189 | 38,380,036 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 7,256,080 | 9,181,987 |
| 1.7 | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | | - |
| 1.8 | Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում | 19 | | - |
| 1.9 | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | 42,876 | 42,876 |
| 1.10 | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 20 | 2,056,903 | 2,038,593 |
| 1.11 | Հետաձգված հարկային ակտիվներ | 21,3 | - | - |
| 1.12 | Այլ ակտիվներ | 22 | 538,365 | 621,384 |
| | *Ընդամենը՝ ակտիվներ* | | 102,160,410 | 87,576,361 |
| 2 | Պարտավորություններ | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 23 | 20,545,800 | 19,395,582 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 24 | 67,262,674 | 54,977,374 |
| 2.3 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 25 | 256,479 | 256,575 |
| 2.4 | Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն | 26 | - | - |
| 2.5 | Վճարվելիք գումարներ | 27 | 8,459 | 12,163 |
| 2.6 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 28,3 | 3,463 | 16,536 |
| 2.7 | Պահուստներ | 34 | - | - |
| 2.8 | Այլ պարտավորություններ | 29 | 929,876 | 676,683 |
| | *Ընդամենը՝ պարտավորություններ* | | 89,006,751 | 75,334,913 |
| 3 | Կապիտալ | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 30 | 5,962,005 | 5,962,005 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | 31 | 1,186,001 | 1,186,001 |
| 3.3 | Պահուստներ՝ | | | |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 390,000 | 390,000 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | 32 | 141,030 | 92,070 |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | 33 | 5,474,623 | 4,611,372 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | 32 | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | *Ընդամենը՝ կապիտալ* | | 13,153,659 | 12,241,448 |
| | *Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ* | | 102,160,410 | 87,576,361 |

Բանկի վարչության նախագահ ____________________ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ ____________________ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13.04.2012թ.

*Ենթահավելված 6*
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

***Հավելված 6***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)

«31» մարտի 2012թ.

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19**
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 3 | 2,256,800 | 2,256,800 | 1,431,916 | 1,431,916 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 3 | (794,995) | (794,995) | (530,549) | (530,549) |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | | 1,461,805 | 1,461,805 | 901,367 | 901,367 |
| | | - | | | |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 186,016 | 186,016 | 167,188 | 167,188 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (84,566) | (84,566) | (43,300) | (43,300) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | | 101,450 | 101,450 | 123,888 | 123,888 |
| Եկամուտ շահաբաժիններից | | - | | | |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից | 5 | 170,982 | 170,982 | 134,262 | 134,262 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 22,223 | 22,223 | 10,891 | 10,891 |
| **Գործառնական եկամուտներ** | | 193,205 | 193,205 | 145,153 | 145,153 |
| Զուտ մասհանումներ ակտիվների □նարավոր կորուստների պահուստներին | 7 | (28,527) | (28,527) | (71,824) | (71,824) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (539,569) | (539,569) | (424,409) | (424,409) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (140,427) | (140,427) | (118,025) | (118,025) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից□զուտ շահույթ/վնաս | 10 | - | - | | |
| | | - | - | | |
| **Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը** | | 1,047,937 | 1,047,937 | 556,150 | 556,150 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (184,686) | (184,686) | (45,969) | (45,969) |
| **Շահույթը (վնասը) հարկումից հետո** | | 863,251 | 863,251 | 510,181 | 510,181 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | 0.72 | 0.72 | 0.43 | 0.43 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | | | |
| **Ժամանակաշրջանի զուտ շահույթ** | | 863,251 | 863,251 | 510,181 | 510,181 |
| Այդ թվում՝ | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | | | | |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | 57,122 | 57,122 | (5,264) | (5,264) |
| Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից | | | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ | | 57,122 | 57,122 | (5,264) | (5,264) |
| Դրամական հոսքերի հեջավորում | | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | | | | | |
| **Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ** | | (8,162) | (8,162) | 877 | 877 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո** | | 48,960 | 48,960 | (4,387) | (4,387) |
| **Համապարփակ ֆինանսական արդյունք** | | 912,211 | 912,211 | 505,794 | 505,794 |
| **Այդ թվում՝** | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | | 0.77 | 0.77 | 0.42 | 0.42 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | | | | | |

Բանկի վարչության նախագահ ______ Ա.ՕՍԻՊՅԱՆ

ԿՏ

Գլխավոր հաշվապահ ______ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

**Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13.04.2012թ.**

*Ենթահավելված 9.1.*
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

*Հավելված 9.1.*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9 ա)

«31» մարտի 2012թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **Շահույթ հարկումից առաջ** | 556,120 | 1,047,937 |
| ***Գործառնական գործունեություն*** | | |
| Հիմնական միջոցների ամորտիզացիա | 62,074 | 72525 |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | 4,360 | 5,018 |
| Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում | (1,331,475) | (2,702,050) |
| Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների | 4,764,030 | 11,582,809 |
| **Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ** | **4,055,109** | **10,006,239** |
| ***Ներդրումային գործունեություն*** | | |
| **Կապիտալ ծախսումներ** | (102,004) | (18,310) |
| **Ներդրումներ** | 632,503 | 1,839,991 |
| **Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում** | - | - |
| **Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ** | **530,499** | **1,821,681** |
| ***Ֆինանսական գործունեություն*** | | |
| **Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)** | 1,713,681 | 1,121,260 |
| **Վճարված դիվիդենտներ** | - | - |
| **Բաժնետոմսերի վաճառք (հետգնում)** | - | - |
| **Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորություններիների աճ/(նվազում)** | 63,309 | 519,074 |
| **Ֆինանսական գործունեությունից  ընդամենը ճշգրտումներ** | **1,776,990** | **1,640,334** |
| **Փոխարժեքի տատանումների ազդեցությունը** | **293,680** | **132,816** |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **26,766,374** | **40,230,609** |

Բանկի վարչության նախագահ ______________ Ա.ՍԻՄԻՆՅԱՆ

ԿՏ

Գլխավոր հաշվապահ ______________ Տ.ԳԱԼՍՏՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13.04.2012թ.